Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 24-ի N 331 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը			
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր
01	06	01	08
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	

I. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի տարեկան ծախսերը պլանավորվում ու իրականացվում են սպասվելիք տարեկան եկամուտների չափով և հաստատվում են «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առանձին հավելվածով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) 2016 թվականի տարեկան ծախսերը պլանավորվել են 4304845.0 հազ. դրամի չափով, որը նախատեսվում է իրա-

կանացնել կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար գանձվելիք վճարների հաշվին:

3. Ստացված եկամուտների հաշվին կիրականացվեն ծախսեր՝ հետևյալ ուղղություններով՝

1) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»՝ նախատեսված է իրականացնել 2457617.6 հազ. դրամի չափով ծախս, որը հաշվարկվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջների համաձայն.

2) «Շարունակական ծախսեր» բաժնով պլանավորվել են կոմիտեի գործունեության իրականացման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի օգտագործման և վառելիքի ձեռքբերման ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 629-Ն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներով սահմանված չափաքանակներով: Էներգետիկ ծառայությունների գումարը մեկ տարվա համար կազմում է 127 170.0 հազ. դրամ: Հաշվարկների ժամանակ հաշվի է առնվել տարածքային ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների գոտիականությունն ու բյուջետային նորմաները.

3) «Կոմունալ ծառայությունների վճար» 4213-րդ հոդվածով պլանավորվում է կոմունալ ծառայություններից օգտվելու համար 2016 թվականին իրականացնել 1879.8 հազ. դրամի չափով ծախս: Ջրի ծախսի հաշվարկը կատարվել է ըստ նորմատիվի՝ 1 աշխատողին տարեկան 8 խոր. լիտր ջուր, իսկ դեռատիզացիայի ծախսը սահմանված է դեռատիզացիայի պայմանագրերով.

4) «Կապի ծառայությունների վճար» 4214-րդ հոդվածով պլանավորվում է կապի ծառայություններից օգտվելու համար 2016 թվականին իրականացնել 21000.0 հազ. դրամի չափով ծախս: Հաշվարկները կատարվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1956-Ն որոշմամբ հաստատված չափաքանակները.

5) «Ապահովագրական ծախսեր» 4215-րդ հոդվածով պլանավորվել է 2 000.0 հազ. դրամի չափով ծախս՝ կոմիտեի համակարգի ծառայողական ավտոմեքենաների ապահովագրության համար.

6) «Գույքի և սարքավորումների վարձակալություն» 4216-րդ հոդվածով ծախսերը նախատեսված են՝ համաձայն կոմիտեի աշխատակազմի կողմից կնքված տարածքների վարձակալության պայմանագրերի, որոնց ընդհանուր գումարը կազմում է 62311.7 հազ. դրամ.

7) «Արտագերատեսչական ծախսեր» 4217-րդ հոդվածով՝ կոմիտեի կողմից կնքված արտագերատեսչական պահպանության պայմանագրային գումարը կազմում է 35490.0 հազ. դրամ.

8) «Գործուղումներ և շրջագայության ծախսեր»՝ 2016 թվականին պլանավորվում են գործուղումներ՝ ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ՝ հանրապետությունից դուրս, որոնց գծով նախատեսվում է իրականացնել համապատասխանաբար 4221-րդ հոդվածով՝ 12000.0, և 4222-րդ հոդվածով՝ 10000.0 հազ. դրամի չափով ծախս: Հաշվարկները կատարվել են Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների գործուղումների համար սահմանված նորմաների հիման վրա.

9) պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ներառում են՝ «Վարչական ծառայություններ» 4231-րդ հոդվածով՝ 500.0 հազ. դրամ, «Տեղեկատվական ծառայություններ» 4234-րդ հոդվածով՝ 15000.0 հազ. դրամ, «Ներկայացուցչական ծախսեր» 4237-րդ հոդվածով՝ 5000.0 հազ. դրամ, որն անհրաժեշտ է մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ կոմիտեի համագործակցության համար, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239-րդ հոդվածով՝ 30000.0 հազ. դրամ.

10) «Մասնագիտական ծառայություններ» 4241-րդ հոդվածով նախատեսվել է 90000.0 հազ. դրամ գումար՝ գերատեսչական ցանցի սպասարկման աշխատանքների, կոմիտեում ներդրված էլեկտրոնային համակարգերի, համակարգչային սերվերների ծրագրային սպասարկման և պահպանման ծառայությունների, «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի և կոմիտեի կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման, www.e-cadastre.am կայքի սպասարկման ծառայությունների, գազի սպասարկման, ծխատարի տեղադրման և մաքրման ծառայությունների, պետական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման համար, ինչպես նաև՝ կրթական կենտրոնի գործարկման համար.

11) «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251-րդ հոդվածով նախատեսված ծախսերը 2016 թվականին կազմում են 30 000.0 հազ. դրամ, իսկ «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 4252-րդ հոդվածով նախատեսված ծախսերը՝ 28000.0 հազ. դրամ.

12) «Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261-րդ հոդվածով նախատեսվում է 2016 թվականին կատարել 30000.0 հազ. դրամի, «Տրանսպորտային նյութեր» 4264-րդ հոդվածով՝ 50597.3 հազ. դրամի, «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267-րդ հոդվածով՝ 5 000.0 հազ. դրամի չափով ծախսեր.

13) «Պարտադիր վճարներ» 4823-րդ հոդվածով նախատեսվել է 6000.0 հազ. դրամ՝ աղբահանության (համաձայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նորմաների և պայմանագրերի), տեխզննման-բնապահպանության և այլ ծախսերի համար.

14) «Պահուստային միջոցներ» 4891-րդ հոդվածով նախատեսվել է 5000.0 հազ. դրամ՝ սեփականատերերին և օգտագործողներին պատճառված հնարավոր վնասների փոխհատուցման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը			
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր
01	06	01	11
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	

15) «Տրանսպորտային սարքավորումներ» 5121-րդ հոդվածով 2016 թվականի ընթացքում նախատեսվում է կատարել 15000.0 հազ. դրամի չափով ծախս՝ մեկ ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերման համար.

16) «Վարչական սարքավորումներ» 5122-րդ հոդվածով 2016 թվականի ընթացքում նախատեսվում է կատարել 30000.0 հազ. դրամի չափով ծախս՝ համակարգիչների, տպիչների, սկաների, գրասենյակային կահույքի և այլ սարքավորումների գնման համար.

17) «Ոչ նյութական հիմնական միջոցներ» 5132-րդ հոդվածով նախատեսվում է կատարել 15000.0 հազ. դրամի չափով ծախս՝ երկու ծրագրային փաթեթներ ձեռք բերելու համար.

18) «Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր» 5133-րդ հոդվածով նախատեսվում է կատարել 451269.6 հազ. դրամի չափով ծախս.

19) «Նախագծահետազոտական ծախսեր» 5134-րդ հոդվածով նախատեսվում է կատարել 2000.0 հազ. դրամի չափով ծախս՝ ընթացիկ նորոգման և վերանորոգման՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախահաշվային և նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման համար:

4. Կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերը.

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդհանուր գումարը (հազ. դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	4304845.0
այդ թվում՝	
Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	3791575.4
այդ թվում՝	
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	3224626.6
այդ թվում՝	
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	3224626.6
այդ թվում՝	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	2457617.6
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	611473.4
Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	155535.6
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	555948.8
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	249851.5
Էներգետիկ ծառայություններ	127170.0
Կոմունալ ծառայություններ	1879.8
Կապի ծառայություններ	21000.0
Ապահովագրական ծախսեր	2000.0
Գույքի և սարքավորումների վարձակալություն	62311.7
Արտագերատեսչական ծախսեր	35490.0
ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	22000.0
այդ թվում՝	
Ներքին գործուղումներ	12000.0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	10000.0
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	50500.0
Վարչական ծառայություններ	500.0
Տեղեկատվական ծառայություններ	15000.0
Ներկայացուցչական ծախսեր	5000.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30000.0
ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	90000.0
Մասնագիտական ծառայություններ	90000.0
ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)	58000.0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	30000.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	28000.0
ՆՅՈՒԹԵՐ	85597.3
Գրասենյակային նյութեր և հագուստ	30000.0
Տրանսպորտային նյութեր	50597.3
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	5000.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	11000.0
ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ	6000.0

ՆԿԱՏՄԱՄԲ	
Պարտադիր վճարներ	6000.0
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	5000.0
Պահուստային միջոցներ	5000.0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	513269.6
Հիմնական միջոցներ	513269.6
այդ թվում՝	
Մեքենաներ և սարքավորումներ	45000.0
այդ թվում՝	
Տրանսպորտային սարքավորումներ	15000.0
Վարչական սարքավորումներ	30000.0
Այլ հիմնական միջոցներ	468269.6
այդ թվում՝	
Ոչ նյութական հիմնական միջոցներ	15000.0
Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	451269.6
Նախագծահետազոտական ծախսեր	2000.0

ԳԼՈՒԽ 2.

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

5. 2016 թվականին գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով նախատեսվում է իրականացնել աշխատանքներ գեոդեզիական, տեղագրական և թեմատիկ քարտեզագրության, երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման և աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման աշխատանքների ուղղություններով:

6. Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառը նպատակաուղղված է պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, տնտեսության, պաշտպանության, գիտության ու կրթության բնագավառները և բնակչությանը ժամանակակից քարտեզագրագեոդեզիական նյութերով ապահովելուն:

ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳԵՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՊՈԼԻԳՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Հայաստանի տարածքը գտնվում է Արաբական և Եվրասիական պլատֆորմների շփման գոտում, ընդ որում, արբանյակային դիտարկումների տվյալներով (ԱՄՆ) Արաբական պլատֆորմը շարժվում է Եվրասիական պլատֆորմի նկատմամբ դեպի հյուսիս-արևմուտք՝ 28+3 մմ / տարի արագությամբ:

8. Այդ շարժման պատճառով տեղի է ունենում երկրակեղևի մշտական դեֆորմացիա՝ Արաբական և Եվրասիական պլատֆորմների գոտում՝ ընդհանրապես, և Հայաստանում՝ մասնավորապես: Հայաստանի և հարակից տարածքների երկրակեղևի դեֆորմացիաների վերաբերյալ առաջին բարձր ճշտությամբ տվյալներն ստացվել են 1997 թվականին ԱՄՆ-ի Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի երկրաֆիզիկայի ինստիտուտի կողմից:

9. Կախված ապարների խտությունից՝ դեֆորմացիաները տարբեր մասերում տարբեր են, և սահմանային դեֆորմացիաներին հասնելու արագությունները նույնպես տարբեր են: Երկրակեղևի առավելագույն դեֆորմացված մասերը նրա ամենաթույլ գոտիներն են, այսինքն՝ խզվածքները: Ըստ սեյսմիկ իրադարձությունների համաշխարհային վիճակագրության տվյալների՝ ուժգին երկրաշարժերի մեծ մասը տեղի է ունենում ակտիվ խզվածքների երկայնքով:

10. 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժն ամբողջ մարդկության առջև դրեց նոր խնդիր երկրաշարժերը կանխատեսելու վերաբերյալ: Հայաստանը ցնցվեց աղետից, ինչը մարդկությանը դեռ երկար տարիներ կհիշեցնի, որ աշխարհի բոլոր երկրների կառավարությունները պետք է լուրջ միջոցներ ձեռնարկեն երկրաշարժերի կանխատեսման, իսկ հետագայում՝ նաև կանխարգելման ուղղությամբ:

11. Երկրակեղևի հորիզոնական շարժումներն ուսումնասիրելու նպատակով սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել Արբանյակային գեոդեզիական ցանցի՝ նախկինում դիտարկված և նոր տեղադրվող հիմնակետերի դիտարկման աշխատանքներ՝ GPS ընդունիչներով, ինչը հնարավորություն կտա այն նույնպես պահելու արդիական վիճակում:

12. Սեյսմատեկտոնիկ ակտիվ խզվածքների գոտում նախատեսված համալիր աշխատանքներըն անհրաժեշտ է իրականացնել պարբերաբար՝ 3 փուլով, տարեկան մեկ փուլ:

13. Համաձայն «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական գեոդինամիկական պոլիգոնի ստեղծումը, թարմացումը և զարգացումը դասվում են պետական նշանակության աշխատանքների շարքը:

14. Ներկայացված ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2010 թվականի օգոստոսի 8-ի ՆԿ-140-Ն կարգադրության պահանջները (հայեցակարգի 35-րդ կետ), որոնց համաձայն կոմիտեն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) սեյսմիկ վտանգի ռիսկայնության աղետների հնարավոր կանխորոշմանը նպաստելու համար պետական գեոդինամիկական պոլիգոնների ստեղծում, թարմացում և զարգացում՝ օրենքով սահմանված կարգով.

2) սեյսմիկ ակտիվ գոտիներում երկրակեղևի ուղղաձիգ և հորիզոնական տեղաշարժերի հայտնաբերման նպատակով ստեղծված պետական գեոդինամիկական պոլիգոններում դիտարկման տվյալների վերլուծության արդյունքների տրամադրում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ու մյուս իրավասու մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացման համար:

15. Քանի որ հանրապետությունում առկա են 6 ակտիվ խզվածքներ և հաշվի առնելով Սպիտակի աղետալի երկրաշարժի հետևանքները՝ անհրաժեշտ է տարածաշրջանում ստեղծել հատուկ գեոդինամիկական պոլիգոն՝ երկրակեղևի հորիզոնական և ուղղաձիգ տեղաշարժերի ուսումնասիրությունների իրականացման նպատակով:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

16. Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ակտիվ գոտիներում ճշգրիտ գեոդեզիական չափագրումների ու համատեղ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կարելի է մոտավորապես կանխորոշել, թե որտեղ պետք է տեղադրել երկրաշարժագիտական սարքերն ու համակարգերը: Երկրակեղևի այն մասերում, որտեղ կան կրկնվող նիվելիրային ընթացքներ, ժամանակակից ուղղաձիգ տեղաշարժերի տվյալներով հնարավոր է կանխորոշել դեֆորմացիաների տարածաշրջանները: Երկրակեղևի ուղղաձիգ շարժումների գեոկինեմատիկայի ուսումնասիրման նպատակով բարձր ճշգրտության I դասի նիվելիրացումը պարբերաբար կատարվել է նախկին Խորհրդային Միության սեյսմիկ շրջաններում:

17. Աշխատանքների հիմնական նպատակը փուլային դիտարկումների հիման վրա սեյսմոլոգներին, գեոֆիզիկներին և այլ շահագրգիռ մասնագետներին անհրաժեշտ տվյալների տրամադրումն է, որը կնպաստի անհրաժեշտ վայրերում ճշգրիտ երկրաֆիզիկական սարքավորումների տեղադրմանը:

18. Սպիտակի տարածաշրջանի խզվածքի գոտում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել բարձր ճշգրտության I դասի նիվելիրացման և արբանյակային GPS դիրքորոշման կայաններով դիտարկման աշխատանքներ: Աշխատանքների հիմնական նպատակը փուլային

դիտարկումներից ստացված տվյալների վերլուծության հիման վրա երկրակեղևի ուղղաձիգ և հորիզոնական տեղաշարժերի մասին անհրաժեշտ տվյալներ ստանալն է:

19. Համեմատելով Սպիտակի երկրաշարժի գոտում 1979 և 2007 թվականներին իրականացված I դասի նիվելիրացման աշխատանքների արդյունքները, N 2002 գրունտային հենանիշի հավասարակշռված բացարձակ բարձրությունները՝ կարելի է ենթադրել, որ երկրի կեղևի ուղղաձիգ տեղաշարժը նշված կետում կազմում է 380 մմ:

20. Հաշվի առնելով այդ աշխատանքների կարևորությունը և մեր տարածաշրջանում վերջին տարիների սեյսմիկ ակտիվությունը՝ 2013 թվականին Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնում վերսկսվել են աշխատանքները: Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացման և GPS արբանյակային դիրքորոշման կայաններով դիտարկման աշխատանքներ:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

21. Ծրագրի իրականացման նպատակով դիտարկման ժամանակ պարտադիր պայման պետք է հանդիսանան մշտական գործող «Կոմիտաս» և ռեֆերենց կայանների աշխատանքները: Արբանյակային գեոդեզիական ցանցի հիմնակետերը պետք է դիտարկվեն երկհաճախական արբանյակային դիրքորոշման կայանների միջոցով: Հիմնակետերի դիտարկման ավարտից հետո հավասարակշռման և կոորդինատների հաշվարկման աշխատանքների գործընթացում անպայման պետք է օգտագործել Հայաստանի Հանրապետության տարածքում 2013 թվականին ստեղծված մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի չափման տվյալները:

22. I դասի նիվելիրացման աշխատանքները պետք է կատարել ժամանակակից թվային նիվելիրի միջոցով, որն ավտոմատ կերպով չափաձողերից վերցված հաշվեցույցները մուտքագրում է հիշողության քարտի մեջ՝ բացառելով սխալների մարդկային գործոնը, իսկ անթույլատրելի պայմանների (թևերի անհավասարության, ջերմաստիճանի և մթնոլորտային ճնշման կտրուկ տատանումների, ռեֆրակցիայի և այլնի) դեպքում գործիքը չի չափում:

23. Ծրագրի իրականացման համար նախատեսվում են՝

1) I դասի նիվելիրացման աշխատանքներ.

2) GPS հիմնակետերի դիտարկում, հավասարակշռում և կոորդինատների հաշվարկում.

3) I դասի նիվելիրացման նյութերի մշակում, հիմնակետերի կոորդինատների և բարձունքային նիշերի կատալոգի կազմում.

4) տեխնիկական հաշվետվության կազմում:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

24. Ծրագրի իրականացումից ակնկալվում է ունենալ՝

1) խզվածքների տարածքում 48 GPS հիմնակետերի դիտարկման և I դասի 111.1 գծ.կմ նիվելիրացման, ինչպես նաև 320.1 գծ.կմ մշակման, հավասարակշռման նյութերը, 118 բարձունքային նիշերի կատալոգը.

2) գրավիմետրական չափումներ՝ 12 հենանիշի վրա.

3) տեխնիկական հաշվետվությունը:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

25. 2016 թվականի գեոդեզիայի բնագավառում Սպիտակի տարածաշրջանի գեոդինամիկական պոլիգոնի ստեղծման գեոդեզիական աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ (ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳԵՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՊՈԼԻԳՈՆ) ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	GPS կետերի դիտարկումներ՝ 2-րդ դասի ծրագրով (3 փուլով)	կետ	48	145,048	6,962.289			48	6962.288908	48	6,962.289	48	6962.288908
2.	GPS կետերի կոորդինատների հավասարակշռում և հաշվարկում	կետ	48	6,040	289.920			48	289.92	48	289.920	48	289.92
3.	I դասի նիվելիրացում՝ խզվածքներով (3 փուլով)	գծ.կմ	111	201,363	22,371.430			20	4027.26018	111.1	22371.43	111.1	22371.4303
4.	Գրավիմետրական աշխատանքներ	կետ	12	120,000	1,440.000				0	12	1440.00	12	1440
5.	I դասի նիվելիրացման նյութերի մշակում և հավասարակշռում	գծ.կմ	320	5,678	1,817.528				0			320.1	1817.5278
6.	I դասի նիվելիրացման հենանիշերի բարձրությունների կատալոգի կազմում	հենանիշ	118	4,450	525.100				0			118	525.1
7.	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետվու-թյուն	1	1,333,671	1,333.671				0			1	1333.671
	Ընդամենը				34,739.938		0.00		11,279.469		31,063.639		34,739.938

WGS-84 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՔՎԱԶԻԳԵՈԻԴԻ ՄՈԴԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ, GPS ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՆԻՎԵԼԻՐԱՑՄԱՆ, ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ՆՈՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՈՎ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

I. ՔՎԱԶԻԳԵՈԻԴԻ ՄՈԴԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

26. Տարբեր տեղագրագեոդեզիական, քարտեզագրական, հետախուզական, նախագծային, շինարարական և այլ աշխատանքներ իրականացնելու համար GPS դիտարկումներից ստացված WGS-84 համաշխարհային համակարգում գեոդեզիական կոորդինատները Հելմերտի բանաձևի միջոցով վերահաշվարկվում են լոկալ տեղական հարթ ուղղանկյուն կոորդինատային համակարգում՝ ապահովելով բարձր ճշտություն:

27. Սակայն GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից «նորմալ» բարձունքային նիշերին անցումը (1977 թ. Բալթյան համակարգ) չի ապահովում բարձր ճշտություն, քանի որ դա կախված է ոչ միայն հաշվարկային բանաձևերից, այլ նաև Երկրագնդի տվյալ շրջանի գրավիտացիոն դաշտից: Երկրագնդի մարմնում զանգվածների ոչ համաչափ տեղաբաշխման հետևանքով նրա մակերևույթի վրա ծանրության ուժը փոփոխվում է ոչ օրինաչափ ձևով:

28. Այդ խնդիրը լուծելու համար «նորմալ» բարձրությունները հաշվարկվում են տարածքի քվազիգեոիդի թվային մոդելից ստացված ուղղումների օգնությամբ, որոնք արտահայտում են երկրագնդի գրավիտացիոն դաշտի բարդ բնութագիրը: Մոդելը պետք է կառուցել Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված GPS դիտարկումներից ստացված 400 կետերի «գեոդեզիական» և նույն կետերի I և II դասերի նիվելիրացման աշխատանքներից ստացված «նորմալ» բարձունքային նիշերի համադրման, խորը վերլուծությունների, ինչպես նաև բարդ հաշվարկների միջոցով: Սակայն Հայաստանի Հանրապետության լեռնային շրջաններում, որտեղ նման տվյալները բացակայում են, մոդելը հաշվարկված է ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով, ինչը չի բավարարում ժամանակակից պահանջները:

29. Սույն ծրագրով Հայաստանի Հանրապետության տարածքի որոշ բարձրադիր շրջաններում նախատեսվում է իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրված իրական ժամանակում մշտական գործող ռեֆերենց կայանների ձևափոխվող՝ տրանսֆորմացիոն պարամետրերի ճշգրտման մակարդակի բարձրացմանը, որն էլ կապահովի

«ՌՈՎԵՐ» դիտարկման GPS կայաններից կետի տեղադիրքի կոորդինատների անմիջապես ստացումը ArmWGS-84 համակարգում:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

30. Սույն ծրագրով Հայաստանի Հանրապետության տարածքի որոշ բարձրադիր շրջաններում նախատեսվում է իրականացնել GPS դիտարկումներ, II դասի նիվելիրացման աշխատանքներ: Արդյունքում կստանանք քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումներից ստացված «գեոդեզիական» բարձրությունից «նորմալ» բարձունքային նիշերին անցումը՝ բարձր ճշտությամբ՝ հնարավորություն տալով խնայելու ժամանակ և ֆինանսական միջոցներ:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

31. Քվազիգեոիդի մոդելի ստեղծման աշխատանքների ավարտից հետո արդեն հայտնի 400 եզակետերի հիման վրա կստանանք հաշվարկված ինտերպոլացիոն և էքստրապոլացիոն եղանակներով ստացված տրանսֆորմացիոն նոր գործակիցներ (Dx, Dy, Dz, wx, wy, wz և So):

32. Յուրաքանչյուր 1:200 000 մասշտաբի տեղագրական քարտեզի թերթում WGS-84 կոորդինատային համակարգում պարունակվող վերահաշվարկված կետերի կատալոգների կազմման համար անհրաժեշտ է՝

1) կատարել չորս դասի ՊԳՑ ցանցի կետերի կոորդինատների, բարձունքային նիշերի, դիրեկցիոն անկյունների, կողմերի երկարությունների, մերձեցման անկյունների համակարգչային մուտքագրում.

2) հակադարձ գեոդեզիական խնդիրների լուծման միջոցով որոշել կետերի միջև դիրեկցիոն ուղղությունները և կողմերի երկարությունները.

3) հաշվարկել WGS-84 համակարգում գեոդեզիական կետերի միջօրեականների մերձեցման անկյան մեծությունը.

4) կազմել WGS-84 համակարգում գեոդեզիական ցանցի կետերի դասավորության 1:200000 մասշտաբի տեղագրական քարտեզի սխեման.

5) Հայաստանի Հանրապետության տարածքի 1:200 000 մասշտաբի 10 կատալոգի հրատարակում (բազմացում, գրքակազմում, կազմի վրա տառերի դրոշմում).

6) կատարել WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում ցանցի կետերի դիտարկումներ.

7) կատարել II դասի նիվելիրացման աշխատանքներ.

8) ստեղծել քվազիգեոիդի ճշգրտված թվային մոդելը, որը կապահովի GPS դիտարկումների «գեոդեզիական» կոորդինատներից այլ էլիպսոիդային և «նորմալ» բարձունքային նիշերին անցումը (ակնկալվում է ստանալ պլանային և բարձունքային դիրքի կոորդինատների՝ մինչև ± 40 մմ ճշտության ձևափոխում):

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

33. Ծրագրի իրականացումից ակնկալվում է ունենալ՝

1) GPS 50 հիմնակետերի դիտարկում և կոորդինատների հավասարակշռում ու հաշվարկում.

2) II դասի 35.0 գծ.կմ նիվելիրացում և նյութերի մշակում:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

34. Ծրագրով նախատեսված WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդի-նատային համակարգում գեոդեզիական ցանցերի ուսումնասիրման և հետազոտման, քվազիգեոիդի մոդելի ստեղծման, GPS դիտարկման և նիվելիրացման, տրանսֆոր-մացիոն նոր գործակիցներով կոորդինատների վերահաշվարկման և կատալոգների կազմման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 2 աղյուսակում:

Աղյուսակ N 2

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՔՎԱԶԻԳԵՈԻԴԻ ՄՈԴԵԼԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	GPS կետերի դիտարկում	կետ	50	135,884.5	6,794.224	0	0	0	0	50	6794.224	50	6794.224
2.	Կետերի կոորդինատների հավասարակշռում և հաշվարկում	կետ	50	6,039.8	301.990	0	0	0	0	50	301.990	50	301.990
3.	II դասի նիվելիրացում	գծ. կմ	35.0	164,285.2	5,749.981	0	0	0	0	35	5749.981	35	5749.981
4.	II դասի նիվելիրացման նյութերի մշակում	գծ. կմ	35.0	5,678.0	198.730		0		0			35	198.73
	Ընդամենը				13,044.925		0.000		0.000		12,846.195		13,044.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ) ՀԱՄԱՐ ԲԱԶԱՅԻՆ ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ (1396.1 ՀԵԿՏԱՐ)

I. ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

35. Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի իրականացման ծրագիրը մշակվել է՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 197-Ն որոշմամբ հաստատված երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգի պահանջներից:

36. Այս ուղղությամբ 2005-2012 թվականներին Հայաստանի Հանրապետության մի շարք բնակավայրերում (այդ թվում՝ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում), իրականացվել են բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն աշխարհագրական անվանումների, հողային ֆոնդի, անշարժ գույքի նպատակային, գործառնական նշանակության, հողատեսքերի, ջրագրության, ռելիեֆի, գծային ենթակառուցվածքների օբյեկտների մասին քարտեզագրական և տեքստային տվյալների տեղեկատվական բանկի ստեղծումն ու կառավարումն էր:

37. Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի ստեղծումը և ներդրումը թույլ կտան բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի:

38. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում օգտագործվում է ժամանակակից երկրատեղեկատվական համակարգը:

39. Ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օտագործումը կնպաստի՝

1) Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը.

2) կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը.

3) տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը.

4) տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը.

5) տարածական տվյալների մատչելիության ապահովմանը.

6) հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը.

7) տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը.

8) տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:

40. Երկրատեղեկատվական համակարգի (ԵՏՀ) ստեղծումն աշխարհագրական բոլոր տեսակի կապակցված տեղեկատվության ներդրումն է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր օբյեկտակողմնորոշիչ հանգամանքում տալ օպերատիվ լուծումներ և դրանով ստանալ անհրաժեշտ քարտեզագրական և թեմատիկ տեղեկատվություն:

41. Երկրատեղեկատվական տվյալների թեմատիկ բանկի առկայությունը պայմանավորված է քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հավաստի, օպերատիվ ու արդիական տարածական տվյալների սպառման պահանջներով:

42. 2013 թվականին սկսվել են Գյումրի քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները՝ 817 հեկտար տարածքի վրա, 2014 թվականին՝ 820 հեկտար, իսկ 2015 թվականին՝ 1396,1 հեկտար տարածքների վրա:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

43. Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից պահանջները բավարարող բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծումն է, որն անհրաժեշտ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին տնտեսության տարբեր ոլորտների խնդիրների արդյունավետ լուծման, հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների վերաբերյալ տվյալների (ինչպես քարտեզագրական, այնպես էլ՝ տեքստային) պետական միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և հանրապետության ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

44. Հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության և նրա առանձին վարչատարածքային միավորների տնտեսության վիճակի ու բնական ռեսուրսների վերաբերյալ, այդ թվում՝ հողային, ջրային, անտառային ռեսուրսների, օգտակար հանածոների, տնտեսական զարգացման, արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների, անշարժ գույքի, բնակչության տեղաբաշխման, ճանապարհային ցանցի ու ենթակառուցվածքների այլ տարրերի, էկոլոգիական վիճակի մասին:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

45. Բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան ստեղծելու և ներդնելու նպատակով 2016 թվականին նախատեսվում է իրականացնել Գյումրի-1396,1 հեկտարի համար ԵՏՀ-ի աշխատանքները:

46. Հայաստանի Հանրապետության բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1) քարտեզագրվող տարածքների օրթոֆոտոհատակագծերի ստեղծում, որոնց շնորհիվ աշխատանքները կիրականացվեն առավել արդյունավետ.

2) նշված տարածքների համար 1:2000 մասշտաբի տեղագրական թվային արդիական իրավիճակով և ռելիեֆով հատակագծերի ստեղծում.

3) ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրում և համաձայնեցում շահագործող կազմակերպությունների հետ.

4) բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի ու տեքստային տվյալների ստեղծում և մուտքագրում տվյալների բազա:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

47. Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք Երևանի և Գյումրու քաղաքային համայնքների համար ստեղծված բազային ԵՏՀ-ի տեղեկատվական բանկ, որը հիմք կհանդիսանա գերատեսչական տարբեր ոլորտների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման

բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, հանրապետության մարզերի, համայնքների և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ ոլորտների խնդիրների լուծման համար:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

48. Հայաստանի Հանրապետության բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքի ստեղծման համար 2016 թվականին նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 3 աղյուսակում:

Աղյուսակ N 3

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	Տեխնիկական նախագծի կազմում	նախագիծ	1	521888.0	521.888	0	0.0	1.000	521.888	1.0	521.888	1	521.9
2.	Գրասենյակային վերծանում (Գյումրի-1396,1)	հա	1396.1	1452.2	2,027.416	0.0	0.0	698.710	1014.7	1396.1	2,027.416	1396.1	2027.4
3.	Դաշտային վերծանում	հա	1396.1	14055.7	19,623.163	0.0	0.0	236.400	3322.8	784.4	11,025.291	1396.1	19623.2
4.	Ստորգետնյա մայրուղա-յին հաղորդակցուղիների հանութագրում կառուցա-պատ տարածքներում - 1 հեկտարի համար՝ 2,5 դիտահոր	հա x դիտահոր	3490.25	5270.8	18,396.410		0.0	591.000	3115.0428	1961.0	10,336.039	3490.25	18396.4
5.	Դիտահորերի տարրերի չափագրում, հավաքագրում, ուրվանկարի կազմում և ամփոփագրի կազմում խիտ կառուցապատ տարածք-ներում 1 հեկտարի համար՝ 2,5 դիտահոր	հա x դիտահոր	3490.25	2051.7	7,160.946		0.0	591.000	1212.6	1961.0	4,023.384	3490.3	7160.9
6.	Ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների համաձայնեցում շահա-գործող կազմակերպու-թյունների հետ	հա	4429.50	1051.0	4,655.405	0.0	0.0		0.0		0.000	4429.5	4655.4
7.	Օդալուսանկարների հիման վրա 1:2000 մասշտաբի հատակագծերի կազմում՝ դաշտային վերծանման համար (քաղ. Գյումրի)	հա	1396.10	10,339.47	14,434.934	0	0.0	236.400	2444.25071	784.4	8,110.280	1396.1	14434.9

8.	1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծի ստեղծում	թերթ	99.00	23762.98	2,352.535	0.0	0.0	0.000	0.0	50.0	1,188.149	99.0	2352.5
9.	Բազային երկրատեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ շերտերի ստեղծում, դասակարգում և միաբերում	հա x շերտ	22337.6	337.0	7,527.771	0.0	0.0	3,782.400	1274.7	12550.4	4,229.485	22337.6	7527.8
10.	Բազային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա (քաղ. Գյումրի)	տարր	139610.0	168.3	23,496.363	0	0.0	23,640.000	3978.612	78440.0	13,201.452	139610	23496.4
11.	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետվություն	1	996708.0	996.708	0.0	0.0		0.0		0.000	1.0	996.7
	Ընդամենը				101,193.539		0.000		16,884.451		54,663.384		101,193.539

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՕԴԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՔԱՂԱՔՆԵՐԻ 1:2000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

I. ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

49. Տեղագրական քարտեզագրության բնագավառում պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների ստեղծման և թարմացման նպատակով աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1565-Ն որոշման պահանջների շրջանակներում:

50. Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի քարտեզները հիմք են գերատեսչական տարբեր ոլորտների (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն) խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք քարտեզագրական նյութերի համար:

51. Տիեզերական լուսանկարահանման աշխատանքների իրականացման նպատակով 2008 թվականին ռուսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում ձեռք է բերվել երկրի հեռահար զոնդավորման տվյալների ընդունիչ կայանը՝ համապատասխան սարքավորումներով և ծրագրային ապահովմամբ: Տիեզերական ընդունիչ կայանի միջոցով ստացված նյութերի հիման վրա 2009-2012 թվականներին կոմիտեի կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքները:

52. Սակայն 2010 թվականի հուլիս ամսվանից անսարքության պատճառով խափանվել է ռուսական «ՌԵՍՈՒՐՍ-Դ» լուսանկարահանող արբանյակը և այդ իսկ պատճառով 2013-2014 թվականների թարմացման աշխատանքները շարունակվել են իրականացվել վերգետնյա չափագրման եղանակով: Այսօր գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտների առջև ծառացել են նոր մարտահրավերներ և խնդիրներ, որոնք պահանջում են նոր մոտեցումներ՝ ոչ միայն կարճաժամկետ, այլև՝ երկարաժամկետ հեռանկարային ծրագրերի հետագա զարգացման համար: Նորվեգական դրամաշնորհով 2014 թվականին նախատեսվել և իրականացվել է Հայաստանի Հանրապետության

տարածքի օդալուսանկարահանում՝ 10 սմ թույլատրելիությամբ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար և մնացած քաղաքների ու բնակավայրերի հարակից տարածքների համար, 20 սմ թույլատրելիությամբ՝ 1:2000 մասշտաբի օրթոֆոտոհատակագծերի ստեղծման նպատակով:

53. Ստացված ստերեո-, աերոլուսանկարները տեղանքում որևէ կոորդինատային համակարգում տարածության մեջ կապակցելու նպատակով աերոլուսանկարների ֆոտոեռանկյունավորման նախագծված ցանցում ստեղծվել են տեղանքին համապատասխան տեղադիրքի դաշտային կապակցված կետեր՝ ճանաչման կետեր:

54. Ճանաչման կետերը դիտարկվել և չափագրվում են տեղանքում գտնվող կետային կամ մակերեսային, ինչպես նաև գծային առարկաների հատկանշական կետային համարվող տեղադիրքերի նկատմամբ, որոնք առավելագույնս պարզ են արտացոլված լուսանկարային պատկերներում:

55. Կողմնորոշիչ կետերի ճանաչումը դիտարկվել և որոշվել է կամ պլանային դեղադիրքով, կամ ըստ բարձրության: Սակայն առավել նպատակահարմար է կողմնորոշչի եռաչափ տեղադիրքի՝ պլանաբարձունքային կոորդինատների ստացումը:

56. Դիտարկումից հետո կողմնորաշիչները տեղանքում ամրացվել, նշահարվել, լուսանկարվել և ներկվել են բարձրությունից լավ երևացող սպիտակ կամ կարմիր գույնի ներկերով:

57. Աշխատանքների հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի «WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում տեղագրական քարտեզների և հատակագծերի բաց հրատարակման ընթացակարգը կարգավորելու մասին» N 791-Ն որոշման համաձայն WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում մեկ միասնական քարտեզագրական հիմքի ընդունումն է՝ հանրապետությունում բազային հանդիսացող 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզների, ինչպես նաև այն քաղաքների համար, որոնք ունեն 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր:

58. 1:2000 մասշտաբի ստեղծված օրթոֆոտոհատակագծերը հետագա աշխատանքների իրականացման արդյունքում հիմք կհանդիսանան տեղագրական հատակագծեր կազմելու համար: Տեղագրական քարտեզները նախատեսված են երկրի առջև ծառացած տարաբնույթ խնդիրների լուծման համար, որոնք ստեղծվում են միասնական կոորդինատային և բարձունքային համակարգերում և կազմվում են տեխնիկական

պահանջների և սահմանված տեղեկատվության հիման վրա՝ միաժամանակ արտացոլելով տեղանքի պատկերը տվյալ ժամանակահատվածում:

59. Ստեղծվող թվային բազային քարտեզները հիմք են տարբեր գերատեսչական (քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերության, կադաստրի, տարածքների պլանավորման, գյուղատնտեսական հողերի հաշվառման, հողերի միավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, վարչական և տնտեսական գործունեության, մելիորացիայի, երկրաբանական հետախուզական աշխատանքների, անտառտնտեսության և այլն) խնդիրների լուծման նպատակով թեմատիկ քարտեզների ստեղծման համար:

60. Սույն ծրագրով նախատեսվում է 2016 թվականին իրականացնել Սպիտակ քաղաքի 890.00 հեկտար տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման աշխատանքները:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

61. Աշխատանքների իրականացման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության նշված տարածքների օդալուսանկարները՝ իրենց օրթոֆոտոհատակագծերով ձեռք բերելն ու պահպանելը և այդ տարածքների թվային տեղագրական քարտեզներն արդիական վիճակում պահպանելն է՝ պարբերաբար թարմացնելով այն:

62. 2010-2014 թվականներին իրականացվեցին Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների վարչական սահմանների նկարագրման և ամրացման աշխատանքները: Այդ առումով անհրաժեշտություն է առաջացել ճշգրտված 102 համայնքի վարչական սահմաններն անցկացնել տեղագրական քարտեզների վրա՝ որպես քարտեզագրական կարևորագույն տարր: Անհրաժեշտ է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանների տեղադրում և ճշգրտում՝ մասշտաբային շարքի 1:10 000 և 1:25 000 մասշտաբների տեղագրական քարտեզների վրա՝ ըստ նկարագրի:

63. Միաժամանակ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի թվային քարտեզները տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ՝ հետագայում գլոբալ և կարևորագույն խնդիրներ լուծելու համար, այն է՝ Հայաստանի Հանրապետության տարածքի, այդ թվում՝ բնակավայրերի ԵՏՀ-ի ստեղծում, նավիգացիոն համակարգի ներդնում, ռելիեֆի եռաչափ մոդելների կառուցում և այլն:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

64. 2016 թվականի ընթացքում նախատեսվում է նոր օդալուսանկարների հիման վրա ստեղծել 1:2000 մասշտաբի հատակագծեր:

65. 2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության՝ 1:10000 և 1:25000 մասշտաբների 300 թերթից բաղկացած տեղագրական քարտեզներից 300-ը Microstation ծրագրային փաթեթից պետք է տեղափոխել ArcGis ծրագրային փաթեթ:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

66. Աշխատանքների իրականացման արդյունքում 2016 թվականին նախատեսվում է ունենալ՝

1) տեխնիկական նախագիծ.

2) Սպիտակ քաղաքի 890.0 հեկտար տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծեր.

3) Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների (102 համայնք) վարչական սահմանների անցկացումը մասշտաբային շարքի քարտեզների վրա.

4) Հայաստանի Հանրապետության 10 մարզի վարչական սահմանների տեղադրում և ճշգրտում մասշտաբային շարքի 1:10000 և 1:25000 մասշտաբների տեղագրական քարտեզների վրա.

5) Հայաստանի Հանրապետության 1:10 000 և 1:25 000 մասշտաբների տեղագրական էլեկտրոնային քարտեզների (300 թերթ) տեղափոխում ԵՏՀ-ի միջավայր՝ ArcGis ծրագրային փաթեթում.

6) տեխնիկական հաշվետվություն:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

67. 2016 թվականին տեղագրական քարտեզագրական բնագավառում նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 4 աղյուսակում:

Աղյուսակ N 4

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	Տեխնիկական նախագծի կազմում	նախագիծ	1	354,579.00	354.579	0	0	1	354.579	1	354.579	1	354.579
2.	Օդալուսանկարների հիման վրա 1:2000 մասշտաբի հատակագծերի գրա-սենյակային վերծանում - Սպիտակ -2540 հա	հա	890.00	1,452.19	1,292.449	0	0	200	290.438	545	791.44355	890.00	1292.4491
3.	Օդալուսանկարների հիման վրա 1:2000 մասշտաբի հատակագծերի կազմում՝ դաշտային վերծանման համար	հա	890.00	10,339.47	9,202.128	0	0	200	2067.894	545	5635.01115	890.00	9202.1283
4.	Օդալուսանկարների հիման վրա 1:2000 մասշտաբի հատակագծերի դաշտային վերծանում	հա	890.00	14,055.7	12,509.573	0	0	200	2811.14	545	7660.3565	890.00	12509.573
5.	Տեղագրական հատակագծի ստեղծում	հա	890.00	9,501.92	8,456.709	0	0	0	0	445	4228.3544	890.00	8456.7088
6.	Տեղագրական հատակագծի համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում և ներմուծում տվյալների բազա	տարր	26,700	168.26	4,492.542	0	0	0	0	13350	2246.271	26700.00	4492.542
7.	ՀՀ մարզերի համայնքների վարչական սահմանների անցկացումը մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների վրա	համայնք	102	6,923.83	706.231	0	0	0.00	0	51	353.11533	102.00	706.23066

8.	ՀՀ մարզերի վարչական սահմանների տեղադրում և ճշգրտում մասշտաբային շարքի 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզների վրա	մարզ	10	218,080.80	2,180.808	0	0	0.00	0	5	1090.404	10.00	2180.808
9.	ՀՀ մարզերի վարչական սահմանների տեղադրում և ճշգրտում մասշտաբային շարքի 1:25 000 մասշտաբի տեղագրական քարտեզների վրա	մարզ	10	73,010.40	730.104	0	0	0.00	0	5	365.052	10.00	730.104
10.	1:10 000 և 1:25 000 մասշտաբների տեղա-գրական քարտեզների տեղափոխում ԵՏՀ-ի միջավայր՝ ArcGis ծրագրային փաթեթում	թերթ	300	60,178.68	18,053.604	0	0	50.00	3008.934	150.00	9026.802	300.00	18053.604
11.	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվե-տվություն	1	364,515.00	364.515		0	0.00	0		0	1	364.515
	Ընդամենը				58,343.242		0.000		8,532.985		31,751.389		58,343.242

ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

I. ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

68. Աշխարհի գրեթե բոլոր երկրներում թեմատիկ քարտեզագրությունը դիտարկվում է որպես պետական նշանակության ոլորտ: Դա ամրագրված է նաև «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի «է» կետում: Պետական նշանակության թեմատիկ քարտեզագրության հրատարակումները հանդիսանում են որպես պաշտոնական նյութ, որոնց վրա կարելի է հղում կատարել և օգտագործել հավաստի տեղեկատվություն ստանալու համար:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

69. Բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում նախկինում հրատարակվել են Հայաստանի Ազգային ատլասի Ա և Բ հատորները, ինչպես նաև 15 անվամբ ուսումնական քարտեզներ, որոնք անվճար տրամադրվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներին: Նկատի ունենալով աշխարհի տարբեր երկրներում Հայաստանի Ազգային ատլասի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը և այն հանգամանքը, որ Հայաստանի Ազգային ատլասը ԱՊՀ երկրներից առաջիններից է ավարտուն տեսքով հրատարակվել նախատեսվում է հրատարակել նաև Ատլասի՝ անգլերենով երկհատորյակը և ռուսերենով մեկհատորյակը:

70. 2014 թվականին ավարտվել են Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն տարբերակի Ա հատորի, իսկ 2015 թվականին իրականացվել են Հայաստանի Ազգային ատլասի անգլերենով Բ հատորի 100 էջի նախապատրաստման աշխատանքները:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

71. 2016 թվականին նախատեսվում է Հայաստանի Ազգային ատլասի Բ հատորի անգլերենով տարբերակի 100 էջի նախապատրաստման աշխատանքները:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

72. Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ Հայաստանի Ազգային ատլասի անգլերենով Բ հատորի (100 էջ) էլեկտրոնային տարբերակը:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

73. Աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ Հայաստանի Ազգային ատլասի անգլերենով տարբերակը (100 էջ) և էլեկտրոնային տարբերակը:

VI. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

74. Թեմատիկ քարտեզագրության բնագավառում 2016 թվականին նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 5 աղյուսակում:

Աղյուսակ N 5

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ԹԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն տարբերակ, Բ հատոր												
1)	նյութի թարմացումում	էջ	100	32233.220	3,223.322	0.000	0.000	25.000	805.831	60.000	1,933.993	100.000	3,223.322
2)	խմբագրում	էջ	100	36262.380	3,626.238	0.000	0.000	25.000	906.560	60.000	2,175.743	100.000	3,626.238
3)	քարտեզների ձևավորում	էջ	100	51389.350	5,138.935	0.000	0.000	25.000	1,284.734	60.000	3,083.361	100.000	5,138.935
Ընդամենը					11,988.495		0.000		2,997.124		7,193.097		11,988.495

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

I. ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

75. Ծրագրի հիմնական նպատակը, «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետի պահանջներին համապատասխան, ոլորտի զարգացման և արդյունավետության բարձրացման համար Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարումը, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծումը և տարբեր տեղեկատուների ու բառարանների հրատարակումն է: Այս բնագավառում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 9-ի N 502 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի ստեղծման և վարման կարգի պահանջներին համապատասխան, 2002-2007 թվականներին ավարտվել են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքները, միաժամանակ ստեղծվել է աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը, որը պարբերաբար թարմացվում է: 2002-2014 թվականների ընթացքում կատարվել են Հայաստանի Հանրապետության տարածքի ավելի քան 41000 աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման աշխատանքներ: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել են Հայաստանի Հանրապետության 10 մարզի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների անվանումները: Աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման արդյունքում 2009-2014 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել են մոտավորապես 3200 նոր աշխարհագրական օբյեկտների անվանումներ: Գրանցվել է Հայաստանի Հանրապետության 10 մարզի և Երևան քաղաքի աշխարհագրական օբյեկտների ավելի քան 41 հազ. անվանում: Անվանափոխվել է Հայաստանի Հանրապետության 59 բնակավայր: Այս բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքում հրատարակվել են Հայաստանի Հանրապետության մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուները՝ գազետիրները, որոնցում զետեղված

են Հայաստանի Հանրապետության մարզերի տարածքներում գտնվող աշխարհագրական օբյեկտների անվանումները: Հրատարկվել են նաև «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան», «Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան», «Աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկ», «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման տեղեկատու», «Աշխարհի պետությունների համառոտ տեղեկատու-բառարան», «Աշխարհի խոշորագույն քաղաքների համառոտ տեղեկատու-բառարան» և «Հայաստանի Հանրապետության պատմաճարտարապետական հուշարձանների համառոտ տեղեկատու» բառարանները և տեղեկատուները, որոնք բաժանվել են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական կազմակերպություններին:

76. 2016 թվականին շարունակվելու են Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացման և վարման, ինչպես նաև տարաբնույթ տեղեկատուների նախապատրաստման ու հրատարակման աշխատանքները:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

77. Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ և բխում են «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից: Վարման աշխատանքների ժամանակ շարունակվելու է 2007 թվականի հունիսի 15-ին կայացած ԱՊՀ մասնակից երկրների միջպետական խորհրդի XXVI նստաշրջանում ընդունված որոշման շրջանակներում աշխարհագրական անվանումների տեղեկատվության փոխանակման գործընթացը:

78. 2002 թվականից աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի հաշվառման աշխատանքներն իրականացվել են 1:25 000 մասշտաբի թղթային քարտեզների վրա: Տարիների ընթացքում դրանք մաշվել են և դարձել անօգտագործելի: Այդ պատճառով 2016 թվականից բոլոր քարտեզագրական նյութերը տեղափոխված կլինեն էլեկտրոնային միջավայր և հետագայում թարմացման և վարման աշխատանքները կիրականացվեն էլեկտրոնային քարտեզի վրա, որն անհամեմատ հարմար է օգտագործման համար:

79. 2016 թվականին նախապատրաստվող և հրատարակվող տեղեկատուների անհրաժեշտությունը բխում է «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի ու 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և կարևոր նշանակություն ունի լրատվական, գիտական, կրթական, քարտեզագրական և այլ ոլորտներում:

80. Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ վերջին տարիների ընթացքում շատացել է հայալեզու հրատարակչական արտադրանքը, ստեղծվել են նոր հեռուստա- և ռադիոընկերություններ, գրահրատարակչություններ, թերթեր և ամսագրեր, որոնց կողմից ներկայացվող նյութերում օգտագործվում են բազմաթիվ աշխարհագրական անվանումներ: Անճշտություններից և կոպիտ վրիպակներից խուսափելու նպատակով շատ կարևոր է ունենալ հավաստի և պաշտոնական տեղեկատու, որի միջոցով կներկայացվեն աշխարհագրական անվանումների ճշգրիտ գրելաձևերը:

81. Հայաստանի Հանրապետության մարզերի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուն՝ գազետիրը, հրատարակվել է 2007 թվականին, որից հետո Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանումներն ավելացել են մոտավորապես 2000-ով: Այդ, ինչպես նաև անգլերենով մեծ պահանջարկի պատճառով նախատեսվում է գազետիրը թարմացնել և հրատարակել անգլերենով:

82. Աշխատանքների իրականացման արդյունքում նախապատրաստված և հրատարակված տեղեկատուները նախատեսվում է ըստ անհրաժեշտության տրամադրել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև համապատասխան պետական կազմակերպություններին, կրթական և գիտական հիմնարկներին:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

83. 2016 թվականի ընթացքում ոլորտի կարևորագույն միջոցառումներից է Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների քարտադարանի վարումը և թարմացումը, որոնք կրում են շարունակական բնույթ: Այն ներառում է աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի տվյալների անընդհատ թարմացում և լրացում: 2016 թվականի ընթացքում շարունակվելու են նաև մեծ պահանջարկ ունեցող տարաբնույթ տեղեկատուների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի (գազետիրի) անգլերենով տարբերակի ստեղծման և հրատարակման աշխատանքները:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

84. 2016 թվականին նախատեսվող աշխատանքների շնորհիվ ակնկալվում է ունենալ հետևյալ արդյունքները՝

1) թարմացված Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը.

2) Աշխարհի խոշորագույն քաղաքների անվանումների համառոտ տեղեկատուն՝ 300 օրինակ.

3) Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի (գազետիրի) անգլերենով տարբերակը՝ 200 օրինակ:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

85. 2016 թվականին աշխարհագրական անվանումների բնագավառում նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 6 աղյուսակում:

Աղյուսակ N 6

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների՝												
	1) թարմացում	ամիս	6	440000	2,640.0	0	0.00	1	440.00	3.5	1540.00	6	2640.00
	2) քարտադարանի վարում	ամիս	12	220000	2,640.0	0	0.00	6	1320.00	9	1980.00	12	2640.00
2.	Աշխարհի խոշորագույն քաղաքների անվանումների համառոտ տեղեկատու	օրինակ	300.0	4000	1,200.0		0.00	0.00	0.00	300	1200.00	300	1200.00
3.	Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատու (գազետիր)՝ անգլերենով												
	1) նախապատրաստում	մարզ	11	283,524.4	3,118.8	0	0.00	4	1134.1	8	2268.2	11	3118.8
	2) հրատարակում	օրինակ	200	4000	800.0		0.00		0.00		0.00	200	800.00
	Ընդամենը				10,398.8		0.000		2,894.1		6,988.2		10,398.8

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

86. Հայաստանի Հանրապետության տարածքում կադաստրային քարտեզագրման աշխատանքները հիմնականում իրականացվել են 1998-2004 թվականների ընթացքում՝ հանութագրման ավանդական տարբեր եղանակներով (մենզուլային, տախեոմետրային):

87. Առաջին տարիներին կադաստրային քարտեզներն ստեղծվում և պահպանվում էին ավանդական թղթային տարբերակով, որը, ժամանակի ընթացքում դեֆորմացվելով, առաջացնում էր էական սխալներ և անճշտություններ: Մի շարք համայնքներում դա արդեն առաջացնում է լուրջ խնդիրներ՝ կապված գույքի տեղադիրքի և չափերի հետ:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

88. Ներկայացվող ծրագրի հիմնական նպատակը վերջին տարիներին նոր տեխնոլոգիաների կիրառմամբ որոշ համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված անճշտությունների և սխալների վերացումն է:

89. Քանի որ հիմնականում թվային տեղագրական քարտեզներն ստեղծվել են Հայաստանի Հանրապետության համայնքների կադաստրային քարտեզագրման աշխատանքներն ավարտելուց հետո՝ տարբեր տարիների ընթացքում հանութագրման տարբեր եղանակներով ստացված նյութերի հիման վրա, այդ իսկ պատճառով նախկինում էլեկտրոնային եղանակով հնարավոր չէր կատարել նշված երկու քարտեզների համադրման աշխատանքները: Ներկայիս տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս այդ քարտեզները միմյանց հետ համադրել, որի արդյունքում ի հայտ են գալիս գրեթե բոլոր շեղումները, որոնք հետևանք են նշված պատճառների: Այսօր տարբեր խնդիրների լուծման համար շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում համադրել այդ երկու քարտեզներում առկա տվյալները: Օրինակ, քանի որ հողամասերի իրավական սահմաններն արտահայտվում են կադաստրային քարտեզներում, իսկ տարբեր տեսակի նախագծերը և գլխավոր հատակագծերը կազմվում են տեղագրական քարտեզների հիմքի վրա, ապա անհրաժեշտ է, որ այդ երկու քարտեզները միմյանց հետ համատեղելի լինեն:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

90. Սույն ծրագրով նախատեսվում է կատարել Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների հանութագրման աշխատանքներ, այդ թվում՝ դաշտային չափագրում և գեոդեզիական կետերին կապակցում, չափագրման արդյունքների կամերալ մշակում, հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում, կատալոգների կազմում, տեղագրական և կադաստրային քարտեզների ու հատակագծերի համադրում՝ հիմք ընդունելով հանրապետությունում բազային հանդիսացող 1:10000 մասշտաբի տեղագրական օրթոֆոտոհատակագծերը, քարտեզները և 2014 թվականին իրականացված Հայաստանի Հանրապետության տարածքի օդալուսանկարահանում՝ 10 սմ և 20 սմ թույլատրելիությամբ օդալուսանկարահանման աշխատանքները:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

91. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում կունենանք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ, Գետաշեն, Զարթոնք, Շենիկ, Ոսկեհատ, Առատաշեն, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ, Նոյակերտ, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շենավան, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս, Ձորագյուղ, Մադինա, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բջնի, Մրգաշեն, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գնդևազ, Արենի համայնքների թարմացված և ուղղված կադաստրային քարտեզներ:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

92. 2016 թվականին նախատեսվող Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 7 աղյուսակում:

Աղյուսակ N 7

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	ՀՀ համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքներ	հա	48,945.06	3,513.23	171,955.253	0	0.000	2,000	7,026.460	22,387.73	78,653.245	48,945.06	171,955.253
	Ընդամենը				171,955.253		0.000		7,026.460		78,653.245		171,955.253

ԳԼՈՒԽ 3

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

93. Կոմիտեի կողմից 2002-2004 թվականներին իրականացվել են Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմանների նկարագրությունները և հաստատվել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: 2005-2007 թվականներին իրականացվել են Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի՝ վարչական սահմաններում ընդգրկման աշխատանքները, որով ավարտվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների՝ համայնքների սահմանների ձևավորումը:

94. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ է կատարել Հայաստանի Հանրապետության մարզերի սահմանների նկարագրությունը՝ 1:25000 մասշտաբի քարտեզների հիման վրա, և այն տեղադրել 1:200 000 մասշտաբի տեղագրական քարտեզի վրա:

II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

95. Արդիականացված տեղագրական քարտեզագրական նյութերի հիման վրա հստակեցնել Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանները: Ստանալ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանագծերի նկարագրությունը, ամրակցել սահմանագծերի որոշ շրջադարձային կետերը և ժամանակակից չափագրումների միջոցով կազմել նրանց կոորդինատների ժողովածուները:

96. Լրացնել « Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելվածները:

III. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

97. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանագծերի նկարագրման համար հիմք են ծառայելու 1:10 000 և 1:25 000 մասշտաբների տեղագրական քարտեզները, Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմանների

նկարագրությունները: Հավաքագրվում և ուսումնասիրվում են սահմանների վերաբերյալ բոլոր իրավական, քարտեզագրական և տեխնիկական նյութերը:

98. Տեղագրական 1:200 000 մասշտաբի քարտեզի վրա նախագծվում է սահմանագծի նախնական տարբերակը: Քարտեզի վրա նշահարվում են հանգուցային կետերը: Հանգուցային է համարվում երեք միավորների սահմանագծերի հատման կետը: Հանգուցային կետերի ընտրության նախապատվությունը տրվում է հաստատուն բնական կետերին՝ բլրի գագաթ, գեոդեզիական կետ, գետերի կամ ձորակների միացման կետ, ճանապարհների հատման կամ ամրակցման բնորոշ այլ կետեր:

99. Հանգուցային կետերը կոդավորվում և համարակալվում են սկսած հանրապետության հյուսիս-արևմտյան անկյունից (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Թուրքիա, Վրաստան) դեպի արևելք:

100. Երկու հանգույցով կետերի միջև անցկացվում է երկու մարզերի սահմանագիծը՝ իր բնորոշ շրջադարձային կետերով:

101. Յուրաքանչյուր երկու սահմանակից մարզի համար կազմվում է սահմանագծի մեկ տարբերակ՝ 1:25 000 մասշտաբի քարտեզի հիման վրա:

102. Սահմանագիծն անցկացվում է առավելապես բնական սահմաններով (գագաթ, գետ, ջրբաժան, ձոր, առվակ և այլն):

Դաշտային աշխատանքները

103. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանների նախնական տարբերակը տեղադրվում է օրտոֆոտոհատակագծերի, 1:10 000 մասշտաբի տեղագրական քարտեզների վրա տեղանքի հետ կապված սահմանագծի անճշտությունները հայտնաբերելու համար: Արդյունքում կազմվում է դաշտային աշխատանքների ծրագիրը: Ծրագրում նշվում են սահմանագծի այն հատվածները, որոնք ենթակա են դաշտային տեղազննման, համապատասխան չափագրման և գեոդեզիական ցանցի հետ հանգուցային սահմանակետերի կապակցման: Ծրագրում նշվում են նաև այն հանգուցային և բնորոշ կետերը, որոնք ենթակա են համապատասխան ընդունված նշաձևերի հետ ամրացման:

Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանագծերի վերջնական կազմման, նկարագրման, հաստատման և հանձնման աշխատանքները

104. Օգտվելով 1:10 000 և 1:25 000 մասշտաբների տեղագրական քարտեզներից՝ կատարված նախապատրաստական և դաշտային աշխատանքների հիման վրա կազմվում է երկու հարակից մարզերի սահմանագծի տեքստային նկարագրությունը: Նկարագրությունը կազմվում է երկու հանգուցային կետերի միջև մեկ տարբերակով՝ արևմուտքից արևելք կամ հյուսիսից հարավ:

105. Այսպիսով, երկու հարակից մարզեր ունենում են մեկ սահմանագիծ՝ նկարագրության մեկ տարբերակով:

106. Նկարագրությանը կցվում են սահմանագծի հանգուցային և բնորոշ շրջադարձային կետերի կոորդինատների ժողովածուները: Նկարագրության վերջում, որպես ծանոթություն, նշվում են օգտագործված նյութերի թողարկման տարեթվերը:

107. Նկարագրման և համաձայնեցման ենթակա չեն Հայաստանի Հանրապետության մարզերի սահմանների այն հատվածները, որոնք համընկնում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հետ. դրանց նկարագրությունը և ամրացման դրույթները նախատեսվում են «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և միջազգային պայմանագրերով:

IV. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

108. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանների նկարագրման ծրագրի իրականացման արդյունքում կունենանք՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածը.

2) Հայաստանի Հանրապետության մարզերի սահմանագծերի նկարագրության և կոորդինատների հավաքածուները.

3) Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանագծերը՝ 1:200 000 մասշտաբի հատակագծերի վրա.

4) Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանագծերի տեքստային նկարագրերը.

5) Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանագծերի հանգուցային և բնորոշ շրջադարձային կետերի կոորդինատների ժողովածուները:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

109. Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական սահմանների նկարագրման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ ըստ ծավալների, ծախսերի և ժամկետների, ներկայացված է N 8 աղյուսակում:

Աղյուսակ N 8

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

NN ը/կ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	Առաջին եռամսյակ		Առաջին կիսամյակ		Ինն ամիս		Տարի	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1.	ՀՀ մարզերի սահմանների նկարագրման աշխատանքներ	մարզ	10	4,960,537	49605.37	0	0	1	4960.537	6	29763.222	10	49605.37
	Ընդամենը				49,605.370		0.000		4,960.537		29,763.222		49,605.370

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ